

18705

№ 4 ԴՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ № 4
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Պրոլետարներ բոլոր երկրներ, միացե՛ք!

ԶԻԶԵՐԻՆ

ԲՐԵՍՏԻՑ ՅԵՏՈՅ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ
ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ V ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Գին Է 1 ր. 50 ֆ.



ՀՐԵՏՐԵԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

ԾՈՌԿԵ—1918

52747

9-61

ար

№ 4 ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ՄԻՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՄԻՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Պրոլետարներ բոլոր երկրներ, միացե՛ք!

ԶԻՉԵՐԻՆ

300

1551-21



ԲՐԵՍՏԻՑ ՅԵՏՈՅ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ
ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ Վ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

1927

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

Մ Ո Ս Կ Ի Ա

Տպարան Եզր. Կ. Լ. Ռ. ՄՈՒՐԱԴԵԱՆՆԵՐԻ

1918

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ԺՈՂՈՎՐԴԱ- ԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ V՝ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

I.

Բրեստի դաշինքը կռելուց յետոյ անցած ժամա-
նակաշրջանում Ռուսաստանի արտաքին քաղաքակա-
նութիւնն այլ պայմաններում է ընթացել, քան չոկ-
տեմբերեան Յեղափոխութեան առաջին ամիսներում:
1917 թ. վերջում և 1918 թ. սկզբում մեր արտա-
քին քաղաքականութեան հիմնական գիծը—յեղափո-
խական առաջխաղացումն է եղել: Ռուսաստանի չոկ-
տեմբերեան Յեղափոխութիւնը պիտի աղղանշան հան-
դիսանար անմիջական և մօտալուտ համաշխարհային
յեղափոխութեան—այս է եղել մեր քաղաքականու-
թեան ելակէտը: Մենք շարունակ կառավարութիւն-
ների գլխի վերեւից դիմել ենք բոլոր երկրների յեղա-
փոխական պրոլետարիատին և՛ մեր զործերով, որ
կտրուկ կերպով հակասել է դոյութիւն ունեցող կա-
պիտալիստական կառավարութեանց ողջ հումութեան,
և՛ մեր խօսքերով, մեր ազիտացիոն վարքով, որի նպա-
տակն է եղել՝ բոլոր երկիրների յեղափոխական պրո-
լետարիատը ընդգէտ իմպերիալիզմի, ընդգէտ կապի-
տալիստական հասարակարդի: Սակայն ուրիշ երկիր-
ների պրոլետարիատների անմիջական պաշտպանու-

Թեան բացակայութեան շնորհիւ գերմանաւստրիական իմպերիալիզմի դօրքն աւերեց Ռուսաստանը, գրաւելով Ֆինլանդիան, Ուկրաինան, Մերձբալտիկ գաւառները, Լեհաստանը, Լիտվան, Բելառուսիան, և Խորհուրդների իշխանութեան արտաքին քաղաքականութեան շրջապատն արմատապէս փոխւեց: Վերջին չորս ամսւոյ ընթացքում մենք վարել ենք ձգձգումի և ետածգումի քաղաքականութիւն ամեն կողմից սպառնացող վտանգների նկատմամբ, աշխատելով որքան կարելի է շատ ժամանակ վատաւել—մէկ՝ որ ուրիշ երկրներում անող պրոլետարական շարժումը հասունանայ, ապա՝ որ Խորհուրդների իշխանութեան քաղաքական և հասարակական յարաբերութեանց նոր ձևը Ռուսաստանի ժողովրդական լայն զանգւածների մէջ արմատ քցի և համախմբի նրանց Խորհուրդների պլատֆորմի վրայ:

Երկրի պաշտպանութեան համար տակաւին բաւական ռազմիկ ոյժ ստեղծած չլինելով, շրջապատւած Թշնամիներով, որոնք իր կործանումն են սպանում, պատերազմի և ցարիզմի շրջանի աներեւակայելի քայքայումից տանջւած Խորհուրդների Ռուսաստանն իր արտաքին քաղաքականութեամբ շարունակ պիտի մատնէր ամեն քայլափոխում իրեն կորուստ սպառնացող վտանգներից խուսափելու մասին: Զրգձգումների այդ քաղաքականութիւնը հնարաւոր էր ոչ միայն երկու կօալիցիաների, այլ և նրանցից իւրաքանչիւրի և անգամ պատերազմ վարող ամեն մի երկրի իմպերիալիստական բանակի մէջ շահերի ներհա-

կութեան շնորհիւ: Պայքարն արեւմտեան ճակատում երկու կօալիցիաների ոյժն այնքան կաշկանդում էր, որ նրանցից և ոչ մէկը չէր կարողանում ելնել բացէի բաց և վճռականօրէն՝ Ռուսաստանը կատարեալ աւերածութեան մատնելու: Իմպերիալիստական շրջանների մի մասն երկու կօալիցիայում էլ մտածում է պատերազմից չետոյ գալիք ապագայի մասին, քանի որ Ռուսաստանը—համաշխարհային շուկայ է և զարգացման ամենարեզունակը: Երկու կօալիցիայի այդ տարրերը Թալանի քաղաքականութեան փոխարէն կկամենային կոնցեսսիաների առևտրի, անտեսական նւաճումների քաղաքականութիւն վարել: Ռազմական տարրի մի մասն անգամ մտածում է այս պատերազմում Ռուսաստանի կատարելիք ռազմական դերի մասին: Թէ մէկ և թէ միւս կօալիցիայի հաշի մէջ մանում է Ռուսաստանը կրկին պատերազմի մէջ քաշելու յոյսը, երբ որ նրա ռազմական ոյժը վերականգնած կլինի: Այսպիսով առաջխաղացման միտքը պաշտպանող Խորհուրդների Ռուսաստանը ճգմել կամեցող ռազմիկ կուսակցութեանց կողքին երկու կօալիցիաների մէջ էլ այդ քաղաքականութիւնը կասեցնող տարրեր կան ևս: Խորհուրդների իշխանութիւնը, վճռած լինելով յապաղումի և հաւասարակշռութիւն պահպանելու քաղաքականութիւն վարելու, քանի որ ռազմական ռեփանշի չի ձգտում և համոզւած է, որ պատերազմի յարուցած սոցիալական յարաբերութիւնները ժողովուրդների միջև այլ յարաբերութիւն կհաստատեն,—Բրեստից չետոյ էլ

ստիպւած էր զիջումներ անել զէնքի ոյժին և իր արտաքին քաղաքականութեան մէջ հաշւի առնել ռազմիկ կուսակցութեանց դիմադրող տարրերի ազդեցութիւնը: Այդ տարրերը թող են, մենք նրանց ազդեցութիւնն սու այժմ չենք կարող ուժեղացնել սեփական ռազմական զօրութեամբ, ամենուրեք անող պրոլետարական յեղափոխական շարժումը տակաւին բռնկման վայրկեանին չի հասել, ահա թէ ինչու մեր հաշւեալութիւնն էլ—մեր ծանր նահանջների և մեծ գոհարեռութեանց հաշիւն է: Այդ ամենը մենք արել ենք Ռուսաստանին հանդիստ թողնելու, իր ոյժերը կազմակերպելու միջոց տալու համար: Որ նա հասնի այն վայրկեանին, երբ ուրիշ երկիրների պրոլետարատն օգնի մեզ հոկտեմբերին սկսած սոցիալիստական յեղափոխութիւնն ամբողջացնելու:

Բրեստի դաշինքը կռելուց յետոյ ամբողջ Արեւմտեան նախատուած գերմանական առաջխաղացումն անմիջապէս դադար չի առնում և կայուն դեմարկացիոն գիծ չի հաստատուում: Խորհուրդների զօրքը լքեց Փինլանդիան և Ուկրաինան, սակայն այդ երկրների ժողովրդական զանգւածները գէնքը ձեռին մինչև վերջ յուսակտուր պայքար մղեցին: Համաձայնութեան պետութիւններն այդ միջոցին աստիճանաբար կազմալուծում էին իրենց նախկին ռազմական աշխատակցութիւնը: Այն տեղերում, որտեղից պիտի հեռանային նրանց ռազմական ուժերը, նախկին դաշնակիցներն իրենց տիրապետութիւնն էին հաստատում: Ռուսաստանի և Կենտրոնային իմպերիալիստ-

ների միջև յարաբերութեանց փոխումի առաջին որոշակի վայրկեանը փոխադարձ խաղաղ յարաբերութիւններ հաստատելու թմաստով՝ գերմանական ներկայացուցիչ կոմս Միրբախի ապրիլի 23-ին Մոսկվա զալը և Ռուսաստանի ներկայացուցիչ ընկեր Եօֆֆէի ապրիլի 20-ին Բեռլին հասնելն էր: Նախկին դաշնակիցների նկատմամբ բացասական յարաբերութեանց վայրկեանը Վլադիվոստոկում ապրիլի 5-ին իջեցրած եապոնական դեսանտն էր, թէև դաշնակիցները հաւաստիացնում էին, որ Եապոնիայի կողմից միջամտութեան սկիզբ չպիտի համարուի այդ փաստը: Անգլիական և Ֆրանսիական մամուլի խոշոր մասն այդ պահուն արդէն անդադար կոչ էր անում դէպի կողոպուտի քաղաքականութիւն, այսպէս կոչւած՝ միջամտութեան զրօշակի տակ, իբրև թէ Ռուսաստանի փրկութեան համար: Սակայն Համաձայնութեան պետութեանց կառավարութիւնները Ռուսաստանի նկատմամբ աւելի զղոյշ քաղաքականութիւն էին վարում և առանձնապէս որոշակի բարեկամական դիրք էր բռնել Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ Նահանգների կառավարութիւնը:

Հետեւեալ շրջանում, նգնաժամային վայրկեան է սկսւում Գերմանիայի առաջխաղացման շնորհիւ, երբ ամբողջ Ֆինլանդական և ամբողջ ուկրաինական հողը գրաւելուց յետոյ գերման-ֆիննական և գերմանաւստրիական զօրքերը Խորհուրդների զօրքերին հանդիպեցին և դեմարկացիոն գծի ամբողջ երկարութեամբ անընհատ ընդհարումներ սկսեցին: Այդ մի-

չորցում անմիջական վտանգ է սպառնում Պետրոգրադին: Ճերմակ-թիկնապահներն առաջ են շարժւում Մուրմանի երկիրը, սուր կերպարանք է ընդունում Պետրոգրադի բանալի՝ Ինս Ֆորտի վինակը և միաժամանակ ուկրաինական ճակատում գերման զորքերն առաջ են ընթանում Կուրսկի և Վարոնեժի նահանգներում, Դանեցի աւազանում և Դոնում: Հարաւում գերմանացիք գրաւում են Ղրիմը: Նրանց զորքն անցնում է Դոնն ու գրոհ տալիս Բատայսկի վրայ: Նրանց հովանաւորութեան ներքոյ հակադաւաժական աւազակախմբերը ներմուծւում են Դոն և Կուբան: Վերջապէս գերմանացիք զօրք են ափ հանում Փոթիի մօտ: Տանիկ զօրքը շարժւում է Կովկասի միջով Բազւի վրայ: Այդ ճգնաժամային շրջանը Ֆինլանդական սահմանի վրայ վերջացաւ նրանով, որ գերմանական և ռուս կառավարութեանց միջև համաձայնութիւն կայացաւ այն բաղիտի մասին, որի վրայ Ռուսաստանի և Ֆինլանդիայի միջև կարող է համաձայնութիւն կայանալ: Ուկրաինական ճակատում Ռուսաստանի և Գերմանիայի կառավարութեանց միջև սկսած խաղաղութեան բանակցութիւնների շնորհիւ սկսեց ռազմական ընդհարումների աստիճանաբար լիկվիդացիա, և մայիսին լարւած չարաքերութիւններն երկրամասում վերջացան նրանով, որ մենք Նաւառաստիսկից ետ կանչեցինք մեր Սև ծովի նաւատորմիդը Սևաստոպոլ: Նաւատորմիդն ետ բերելու պահանջը զրւած էր իրրեւ անհրաժեշտ նախապայման բոլոր այլ համաձայնութեանց, ինչպէս

տերրիտորիական, այնպէս էլ քաղաքական և տնտեսական փոխ-չարաքերութեանց: Ներկայումս ծանր հետեւանքներով յղի և ամենահիւանդոտ հարցը այդ կողմից Կովկասի վինակի հարցն է հանդիսանում: Չի լուծւել նաև Դոնի ճգնաժամը, որտեղ հակադաւաժական աւազակախմբեր են գործում: Սակայն նաւատորմի վերադարձը հնարաւոր է դարձրել խառը կամիսսիաների՝ աշխատանքը Բեռլինում, որոնցից մէկը՝ Ֆինլանս-իրաւականը, պիտի հող պատրաստի Ռուսաստանի և Գերմանիայի տնտեսական խաղաղ կենակցութեան համար, իսկ միւսը՝ քաղաքականը, Բրեստից յետոյ սրւած խնդիրները պիտի լուծի:

Նոր բացասական հանդամանք է նախկին դաշնակիցների նկատմամբ չեխ-սլովակների ապստամբութիւնը: Համաձայնութեան պետութիւնների կառավարութիւններն այնպիսի տարրերի կողմն են պահում, որոնք, ինչպէս չեխ-սլովակները հակադաւաժութեան յենարանն են հանդիսանում Ռուսաստանում: Դրանից անմիջապէս յետոյ Մուրմանում ափ է իջնում անգլիական զօրքը և դիւանադէտներն և մամուլն իրենց յայտարարութիւնների մէջ աւելի սուր կերպով են դնում Ռուսաստանի դորժերին միջամտելու հարցը: Սակայն համաձայնութեան երկիրներում տակաւին զինաթափ չեն եղել այն ուժերը, որոնք շարունակում են հաստատել կատարելապէս բարեացակամ վերաբերմունք դէպի Խորհուրդների Ռուսաստանը և մերկացնում Ռուսաստանի վրայ չարձակւելու ծրագրի կարճատեսութիւնը: Համաձայնու-

թեան պետութիւնների կառավարութիւնները չեն կաշկանդել իրենց և մենք աշխատում ենք նրանց նկատմամբ ներկայ դժարութիւնները վերացնել:

Այս է այն բարդ պարագաների պատկերը, որոնց մէջ Խորհուրդների զիւանադիտութիւնն ստիպւած է եղել աշխատել, ամեն կերպ խուսափելով այնպիսի դործողութիւններից, որոնց հետեանքը կարող է լինել իր հակառակորդների անուղղելի բայերը: Խորհուրդների զիւանադիտութիւնն ամեն կերպ նպաստել է երկու կողմիցիաների նկատմամբ էլ մեղմել սուր կոնֆլիկտները և նրանց խաղաղութեամբ հարթելու ազդակներ ստեղծել:

Ռուսաստանի յարաբերութիւնները Միջին Եւրոպայի պետութեանց նկատմամբ որոշում են Բրեստի պայմանագրով և մեր քաղաքականութեան զլխաւոր բովանդակութիւնը Գերմանիայի նկատմամբ—այդ պայմանագրի կեանք մտցնելն է: Կողմադաշտի քաղաքականութեան ներկայացուցիչների Ռուսաստանի նկատմամբ նոյն քաղաքականութիւնը վարելը զիւրացնում են Բրեստի պայմանագրի անորոշութիւնները, բացերն ու թերիները: Բրեստի պայմանագիրը գերմանական զրաւումների ճշգրիտ սահմանները ցոյց չի տալիս և այդ սահմանագիծը նրանով է որոշում, որ պայմանագրի ստորագրման պահուն չետակալ առաջխաղացումը պիտի ընդհատուէր: Բրեստի պայմանագիրը զրաւած վայրերի զրութեան հարցը բաց է թողնում: Զի որոշւած պայմանագրում նաև Ուկրայնայի սահմանների խնդիրը Գերման առաջխաղաց-

ման խնդրի հետ միաժամանակ—ամենասպառնական խնդիրները դառան: Անորոշ, հակասական մասամբ էլ անիրագործելի որոշումները ռուսական նաւերի մասին—նմանապէս Ռուսաստանի նկատմամբ պահանջների նոր հնարաւորութիւն բացին: Բացի այդ հնարաւորութիւն կար ֆիկտիւ ինքնորոշումների միջոցով Բրեստի վնիւներից դէնն անցնելու: Ֆիկտիւ ինքնորոշումի կիրարկումն ամենահեշտ կերպով հնարաւոր էր զրաւած վայրերում, և մենք նոյն իսկ ծանուցում ստացանք, թէ Դւինսկն ինքնորոշում է և իբրև թէ կամենում է միանալ Լիթւանիային: Լսեցինք Բելառուսական զաւառների պատերազմութեան մասին, որ իբրև թէ կամենում է Ռուսաստանի զերիշխանութիւնից դուրս գալ: Բրեստի պայմանագրի 3-րդ յօդւածի հիման վրայ մի յատուկ կամիստիա պիտի տեղերում որոշէր Ռուսաստանից կտրուող վայրերի սահմանները: Երբ որ այդ կամիստիան զուժարուէր Պսկովում, երկու կառավարութեանց կողմից պատուէր ստացաւ որոշել գերմանական զրաւումների վերջնական սահմանագիծը: Սակայն առաջին իսկ նիստից չետոյ նրա աշխատանքն ընդհատուէր և մինչև օրս չի վերսկսուել: Գերմանացիներն այն միաբն էին արտաշայտում, թէ գերմանական զրաւումի սահմանագիծումը տեղական ազդարնակութեան ինքնորոշման հիման վրայ պիտի կատարուի և այդ ինքնորոշումն այն իմաստով էր մեկնում, թէ իւրաքանչիւր կալւածատէր, որի կալւածը գերման զրաւումի վայրում է գտնւում, կարող է վճռել մեր թէ

գերման մասում պիտի մնայ իր կալւածք: Այդ խնդիրը — իբրեւ սկզբունքային խնդիր, փոխադրւեց Բեռլին, որտեղ և պիտի դուրի բաղաբական կամխտի-
այի առջև:

Գրաււած վայրերի ներքին դրութեան հարցը ամենեւին չպարզւեց: Գերման կառավարութիւնը մեզ յայտնեց, թէ երկաթուղային ծառայողները ստանում են առաջւայ ռոնիկը, պարենաւորման և այլ խնդիր-
ներում ամեն տեսակ արտօնութիւններն են վայելում, սակայն չարամիտ աղիտաստորները նրանց շրջանում լուր են տարածում, իբր թէ գերմանական գրաւման շրջանում աշխատող բանւորները սպառնալով, երբ
այդ վայրերը կանցնեն Ռուսաստանին, զրկւելու են իրենց կենսաթոշակներից և տնտեսած գումարներից: Այդ պատճառով էլ գերման կառավարութիւնը գրաւ-
ւած վայրերում հրատարակելու համար մեղմից մի կոչ էր խնդրում, որի մէջ ասւած լինէր, թէ այդ լուրերը սխալ են և թէ ռուս կառավարութիւնը
երկաթուղային բանւորներին յանձնարարում է շա-
րունակել իրենց աշխատանքը: Մինչդեռ մեր ստացած անմիջական տեղեկութիւններից պարզւում էր, որ
երկաթուղային բանւորների ռոնիկը 50% պակասա-
ցրած էր և որ նրանք ուրիշ պաշտօնեաների պէս
հալածանքի են ենթարկւում, որ նրանց շրջանում յա-
նախ ձերբկալումներ են տեղի ունենում և պարենա-
ւորման խնդրում նրանք ոչինչ արտօնութիւն չեն վա-
յելում: Մենք գերման կառավարութեանը պատաս-
խանեցինք, որ գրաււած վայրերի կառավարութեան

համար մենք ոչ մի պատասխանատուութիւն չանձն չենք
առնի, քանի որ գերման իշխանութիւնը վերացնում
է Խորհուրդները և Խորհուրդների կարգի ամեն մի
հետք ոչնչացնում: Գրաււած վայրերի ներքին կառա-
վարութեան խնդիրն էլ պիտի դուրի բաղաբական կա-
մխտիայի առջև Բեռլինում:

Գերմանացիների ռազմական առաջխաղացումը
Բրեստի պայմանագրից յետոյ երկու ճանապարհով է
տեղի ունեցել՝ Փինլանդիայի և Ուկրայնայի վրայով:
Ռուսաստանի հանրապետութիւնը, Բրեստի պայմա-
նագրին հպատակւելուց յետոյ, իր դօրքերը Փինլան-
դիայից դուրս կոչեց և Փինլանդիայում մնացին առան-
ձին անհատներ, Ռուսաստանի բաղաբացիներ, որ իրենց
պատասխանատուութեամբ մասնակցում էին Փինլան-
դական բանւոր դասակարգի պայքարին: Ինչպէս գեր-
ման զօրքի Փինլանդիա ներս խուժելու պահուն,
այնպէս էլ յետակայ ժամանաքի ընթացքում մենք
գերման կառավարութիւնից մի շարք սպառնական
յայտադրեր ենք ստացել այն ժամին, իբր թէ մենք
Փինլանդիա զօրք և զէնք ենք ուղարկել: Ամեն ան-
դամ, երբ այդ մեղադրանքները քննութեան առար-
կայ են դառել, դուրս է եկել, որ նրանք ճշմարտու-
թեան հետ առնչութիւն չունեն: Այնու հանգերձ՝ ռազ-
մական գործողութեանց զաւարումն այդ պատրա-
կով ձգձգւում էր: Նրանք ծառայում էին իբրեւ ար-
դարացուցիչ հանդամանք Փինլանդական ճերմակ-
դիարդիական կառավարութեան համար, երբ Ալան-
դեան կղզում նա ձերբակալեց Շվեդիայից Ռուսաս-

տան վերադարձող Կամենե, Սաւիցկի և Ուլֆ քաղաքացիներին և հրաժարուեց նրանց արձակել: Բրեստի պայմանագրի մեր այդ կարծեցեալ զրոյումն էին մասնանիշ անուժ Փինլանդացիք, երբ ներմակ-գվարդիական հրոսակախմբերը ներս խուժեցին Կարելիա և Մուրմանի երկիրը: Գերման կառավարութիւնն իր կողմից քանիցս մեզ ցուցմունք է անուժ թէ Բրեստի պայմանագրի հիման վրայ մենք պիտի Փինլանդիայի հետ պայման կապենք, և քանիցս ուրս կառավարութիւնն իր պատրաստակամութիւնն է յայտնել այդ բանն անելու, չնայած Փինլանդական ներմակ-գվարդիականների ծանր աստիճան յանդուգն վարքին:

Յիշատակենք ուսման մասնաւորական հրաշանադարձումը Վրյբորդում, մասնաւոր ուրս քաղաքականների, անգամ Խորհուրդների իշխանութեան պաշտօնեաների մահւան դատաւարաւորութիւնը պէպերը: Յիշատակենք Սվեաբորդի կամենդանա (քաղաքապետ) քաղաքացի Կովանկօի կալանաւորումը: Փինլանդիայի մեր ժամանակաւոր ներկայացուցիչը նրա նշանակութեան մասին մեզ հաղորդել էր գերման կառավարութեան միջոցով: Նշանակւել էր թէ չէ, նա խուզարկութեան է ենթարկւել և մինչև որս չի արձակւած: Յիշատակենք նաև, որ Փինլանդացիք զաւթեցին ուրս նաւերը, անգամ հիւանդատար նաւերը, բերդի, արքունի և այլ կարողութիւնը, որ ամբողջ միլիարդներ արժեն: Այնու հանգերձ ուրս կառավարութիւնը ոչ միայն ի պատաս-

խան գերմանական պահանջի քանիցս արտայայտեց իր հաճութիւնը բանակցութիւն վարելու Փինլանդիայի հետ, այլ և անգամ անմիջապէս զինեց նրան նոյն առաջարկութեամբ, որ ստեղծն մանապէս անպատասխան մնաց: Առանձնապէս լարուեց մեր և Փինլանդիայի փոխադարձ յարաբերութիւնը, երբ որ մի կողմից, Բելոսարովի մօտ մեր սահմանին բազմաթիւ Փինն զօրք էր մօտենում, միւս կողմից՝ գերման կառավարութիւնը զիմուժ էր մեզ հարցապնդումով— անգլիացիների ներկայութեան մասին Մուրմանեան երկրում այն էլ այդ հարցապնդումներում անգլիական ուժերի քանակն ամենահիպերբոլիկ (չափազանցացրած), Փանտաստիկ (երեւակայական) ձեով էր ներկայացնում. վերջապէս, մայիսի սկզբին Ինօ Փորտի խնդիրն առաջ եկաւ: Փինն հրամանատարութիւնը պահանջեց, որ այդ Փորտը Փինլանդիային յանձնէի, իսկ Փինլանդիայից անմիջապէս յետոյ նոյն պահանջը գերման կառավարութիւնն առաջադրեց: Դա այն պահուն էր, երբ գերման առաջխաղացման պրոցեսսը ճգնաժամային կայութիւն էր ստեղծել, նրանց ուժերն առաջ էին շարժւել Վարոնէժի և Կուրսկի նահանգներում և նրանց առաջխաղացման սահմանն անորոշ էր: Ապրիլի վերջերին և մայիսի սկզբին գերմանական կառավարութեան ուղղած յայտադրով մենք հարցապնդում արինք նրա նշգրիտ զիտաւորութեանց մասին և զրա հետեւանքն այն եղաւ, որ նրանց կողմից Ինօ Փորտի մասին նոր բանակցութիւն սկսուեց այն իմաստով, որ կոմպրոմիսսային (հաշտեցուցիչ)

էր է գտնուել: Երբ որ, չնայած սկսած բանակցութեանց, Ֆինլանդական զորքերը պահանջեցին, որ Ինօն անյապաղ իրենց յանձնուի, մեր զորքերը լքեցին Ինօն և չօգտ պալթերին: Վերջապէս զերման կառավարութիւնն առաջարկեց մեզ իբրեւ հիմք Ֆինլանդիայի հետ համաձայնութեան դալու—վերադարձնել մեզ Ինօն, առանց նրան դիմելու իրաւունքի և Ռաշվորի շրջակայքը, Բելոստրովի մօտ իսկ մենք պիտի դիջէինք Ֆինլանդիային Մուրմանեան երկրի արեւմտեան կէտը համաձայնութեան ալդ հիմունքն ընդունելով, մենք մեր կողմից վերջ տւինք մալիսին սկսած ճգնաժամային ժամեանին, այնու հապերձ Ֆինլանդիան ալդ առաջարկին պատասխան տալուց և բանակցութեան մէջ մտնելուց տակաւին հրաժարուում է:

Էստլեանդիայի և Լիֆլանդիայի հիւսիսային մասի Ռուսաստանից անջատելը բնաւ չի բղխում Բրեստի պայմանագրից, որ ալդ վայրերի սոսկ ժամանակաւոր զրաւումն է որոշել: Տակաւին յունւարի 28-ին Լիֆլեանդիայի և Էստլեանդիայի ղեմստօն ու ազնականութիւնը մեր Ստոկհոլմի ներկայացուցիչ ընկ. Վարովսկուն մի ղեկարացիա ներկայացրին, ըստ որում, Էստլեանդիան և Լիֆլեանդիան անկախ են յայտարարում: Դրանից յետոյ Ռիգայում մարտի 22-ին և Ռեւելում մարտի 28-ին Էստլեանդիայի և Լիֆլեանդիայի ազնականութեան և ղեմստօնական ժողովները որոշում կայացրին որ և հաւաքւեցին Ռեւելում և Ռիգայում ապրիլի 9-ին և 10-ին և Ռուսաստանից անջատւելու որոշումն ընդունեցին: Մա-



լիսի 19-ին զերման արտաքին գործոց մինիստրութեան միջոցով ալդ որոշումը յայանւած էր ի տեղեկութիւն մեր ներկայացուցիչ Եօֆֆէին: Մալիսի 28-ին յայտագրով ընկ. Եօֆֆէն զերման արտաքին գործոց մինիստրութեան մասնացուց արեց, որ կալայած որոշումն իրօք աղգաբնակութեան համեմատաբար աննշան խմբից է բղխում և որ միմիային իսկական համաժողովրդական անարգել ձայնատուութիւնը, որի նախապայմանը—զրաւում կայացած գորքի հեռացումն է կարող ինքնորոշման և ալդ վայրերի Ռուսաստանից անջատւելու հիմք ծառայել:

Լեհաստանի հետ յարաբերութեան մէջ մտնելու խնդիրը ռուս կառավարութեան համար ծագեց միայն նորերս, երբ Մոսկվա եկաւ Ռեզինցիոն Խորհրդի ներկայացուցիչ պարոն Լեզնիցկին և Արտաքին Գործոց Ժողովրդական Կոմիսսարիատի հետ կամեցաւ յարաբերութեան մէջ մտնել, իբրեւ Լեհաստանի ներկայացուցիչ: Նրա առաջին ալցելութեան պահուն նրա լիազօրութիւնն անորոշ էր, սակայն նորերս նա երկրորդ անգամ եկաւ և արդէն պաշտօնական լիազօրութիւն ունէր իբրեւ Ռեզինցիոն Խորհրդի ներկայացուցիչ մեզ հետ բանակցելու Լեհաստանին վերաբերեալ հարցերի մասին: Այնու հապերձ մենք չենք կարող Լեհաստանի ալթմեան վիճակը—իբրեւ քաղաքական անկախութիւն ընդունել և նրա կառավարութիւնն—իբրեւ ժողովրդական կամքի արտայատութիւն: Ռեզինցիոն Խորհուրդը—մեր աչքում—զերմանական զրաւման օրգաններից մէկն է: Մենք

67961

յարաբերութեան մէջ մասնք Լեզնիցիու հետ—բնականաբար զօրծնական և ոչ զիւանազիտական, երբ որ կոմս Միրբախը մեզ յայտնեց, թէ զբանով մենք գերմանական կառավարութեան պարպորոշ ցանկութիւնը կատարած կլինենք, մասնաւորելով, որ զազ-թականների վերադարձն աջնալիսի հարց է, որի մասին գերման կառավարութիւնը ցանկալի է համարում, որ մենք պ. Լեզնիցիու հետ բանակցենք: Որովհետեւ զբանով գերման իշխանութիւնը փտահացել է իր օրդաններից մէկին—Ռեզենցիոն Խորհրդին և նրաներկայացուցի՝ պ. Լեզնիցիին այլ զօրծերը վարել մեզ հետ, միանգամայն պարզ ու որոշ դրւած հարցի նկատմամբ—այդ հոգի վրայ և այդ հարցի առիթով մենք պ. Լեզնիցիու հետ զօրծնական յարաբերութեան մէջ մասնք:

Գերմանիայի առաջխաղացումն Ուկրայնայի վրայով կարող էր առաւել սպառնալից դառնալ քան Փինլանդիայի վրայով կատարւածը: Բրեստի պայմանագիրը կապելուց անմիջապէս յետոյ Խորհուրդների կենտրոնական կառավարութեան ղորքերը Ուկրայնայից դուրս եկան: Այնտեղ Ուկրայնական Խորհուրդների կառավարութիւնը մնաց, որ Ուկրայնական Խորհուրդների երկրորդ համադումարից յետոյ անկախ Ուկրայնայի Խորհուրդների կառավարութիւնը զարծաւ: Գերման ղորքերը, Ուկրայնայի բոլոր անվիճելի վայրերը զբաւելուց յետոյ, շարունակեցին իրենց առաջխաղացումը Մոսկովայի ուղղութեամբ և նոյն խի Կուրսկի և Վարոնեժի հարաւային

մասերը զբաւեցին: Ուստի և առանձնապէս սուր կերպարանք ստացաւ Ուկրայնական նահատում գերմարկայիոն դիժ հաստատելու հարցը, որ գերման առաջխաղացման առաջը առնէր, մանաւանդ Վարոնեժի նահատում, որտեղ Գերմանիան սկզբում մի քանի գաւառների զբաւումը պահանջեց, ժապ—բաւականացաւ միայն Վալոյսկով, Վալոյսկ կոչւած երկաթուղային կենտրոնը, որ կարեւոր ռազմական դիրք է: Դեմարկայիոն դժի հաստատման խնդիրը սերտ կերպով կապեց առհասարակ գիւնադարի հաստատման խնդրի հետ և զբանով սկիզբ զրւեց բանակցութեանց Ուկրայնայի հետ: Դեռ ևս մարտի 30-ին Ուկրայնական Ռազան դիմեց մեզ և առաջարկեց բանակցութիւններ սկսել: Գերման կառավարութիւնը քանիցս մասնացոյց արեց մեզ, որ, քստ Բրեստի պայմանագրի, մենք պարտաւոր ենք Ուկրայնայի հետ խաղաղութեան դաշինք կապելու: Ապրիլի 3-ին մենք մեր կողմից առաջարկ արինք Սմոլենսկում բանակցութիւններ սկսել և այդ առաջարկն ուղարկւած էր թէ անմիջապէս Կիեւ ռազիօյի միջոցով, թէ Բերլին Սակայն ոչ մէկ և ոչ էլ միւս ճանապարհով Կիեւի Ռազային կարճ միջոցում հասաւ և միայն ապրիլի 16-ին Ռազան մեզ յատուկ սուբհանդալի միջոցով յայտագիր ուղարկեց, որով առաջարկում էր խաղաղութեան բանակցութիւններ վարել Կուրսկում, ուր և շուտով մեկնեց մեր պատ-իրակութիւնը: Ուկրայնական խաղաղութեան

պատւիրակութիւնը միայն մինչև Վորոժրա հասաւ և շարունակեց ռազմական գործողութիւնները երկու կողմերի շուտափոյթ հանդիպումը խանգարեցին: Այդ միջոցին Կիւի Ռազայի աեղը Սկորոպադսկու կառավարութիւնը բռնեց, և Գերմանիան իր ասածի վրայ կանգնեց ու փոխադրեց բանակցութեան վայրը—Կիւ, որտեղ և սկսեցին մայիսի 22-ին: Մերձագոյն նպատակը—դինադադար հաստատելն էր: Ամենակարևորն, այդ բանի համար, զեմարկացիոն զժի հաստատելն էր, ի նկատի ունենալով, որ փաստացի զրաւումը կարող էր Ուկրաինայի վերջնական սահմանագծի հաստատման վրայ ներգործել: Մենք քաջիցս Ուկրաինայի սահմանների հարցը առաջներում էլ էինք բարձրացրել, որովհետև ի նկատի ունէինք, որ զա ամենակարևոր հարցերից մէկն է և նրա աննպաստ փնիւր յղի է մեզ համար վերին աստիճան-ժանը հեռանք-հանգամանքներով: Դեռ ևս մարտի 29-ին ի պատասխան մեր հարցապնդման գերման կառավարութիւնը յայտարարեց մեզ ստատա-սեկրետար Բուշէի օգնականին ռազիօ-հեռագրով թէ Գերմանիան նախորոշել է, որ Ուկրաինան պիտի բաղկացած լինի 9 նահանգից, որ Տաւրիկիան նահանգը պիտի մտնի Ուկրաինայի մէջ առանց Ղրիմի և բացի այդ Ուկրաինային պիտի կցւի Խոլմի նահանգի մի մասը: Երբ որ զինադադարի բանակցութիւնն սկսեց, ուկրաինացիներն այնպիսի պահանջներ առաջադրեցին, որ շատ աւելի հեռու է տանում: Նրանք պահանջեցին, որ զեմարկացիոն զիժը փոխանցւի հիւ-

սիս և արևելք, որ Վարոնէժի նահանգում, մասնաւորապէս, նրանք 8 զաւառ գրաւեն և ընդհանուր առումով նրանց 14 զաւառ անցնի 3 միլլիոն ազգաբնակչութեամբ: Ուկրաինայի հետ բանակցութեան այդ ամենածանր շրջանը զուգադիպեց ճշնաժամային մոմէնտի հետ հարաւում և մասնաւորապէս Սև ծովում: Հարաւային ճակատում գերման զօրքերը չբաւականացան մարտի 9-ին մատնանշած 9 նահանգներով և մայիսի 6-ին Տաղանրոզն ու Դոնի Ռոստովն էլ զրաւեցին: Նրանց յետակայ առաջխաղացումը կանգ առաւ Բատայսկում, որ կարևոր երկաթուղային կենտրոն է և գրաւած էր Խորհուրդների զօրքով: Դեռ ևս ապրիլի 22-ին գերման զօրքերը ներս էին խուժել Ղրիմ և աստիճանաբար զրաւել Տաւրիկեան թերակղզին: Մեր սեծովեան նաւատորմի զի մասը աջողել էր նաւարաստիցս զնալ: Գերման կառավարութիւնից մենք մի շարք յայտադրեր էինք ստանում, որ զանգատ էին պարունակում Սև ծովի զանազան տեղերում ցրւած մեր սեծովեան նաւատորմի թշնամական գործողութիւններից: Ամենահեռաւոր հարաւում առնիկ զօրքն առաջ էր շարժւում Կովկասեան հողի վրայ: Տանիկները զրաւեցին Սլէքսանդրապոլը և փոսնդ կար, որ առաջ կընթանան Բաղւի վրայ, միևնոյն ժամանակ Խորհուրդների Ռուսաստանին թշնամի Անդրկովկասեան կառավարութիւնը զօրք էր ուղարկում Սուխումի շրջակայքը: Արխադիայի Խորհուրդների գէմ: Գերմանացիների և նրանց դաշնակիցների առաջխաղացումը Կու-

բանի վրայ սկսեց թէ Դոնի և թէ Կովկասի կողմից: Եւ հէնց այդ ամենանոյնաժամային վայրկեանին մեզ պահանջ ներկայացւեց, որ սեծովեան նաւատորմիդը Նաւարաստիկից Սեւաստոպոլ՝ վերադառնայ: Այդ առիթով վարած բանակցութեանց ընթացքում Գերմանիան հաւաստիացումներ արեց, որ մինչև պատերազմի վերջը ետ եկած նաւերը չի դորժածի և խաղաղութիւն կնքելուց յետոյ կվերադարձնի Ռուսաստանին: Ապա ամբողջ Ուկրաինական ճակատում Գերմանիան խոստանում էր դեմարկացիոն գիծը չանցնել: Այդ գիծը մօտաւորապէս զուգադիպեց գրաւման փաստացի դրութեանը Ուկրաինական բանակցութեանց սկզբում և մասնաւորապէս Վարոնէժի ճակատում Վալուկայից դէնը չէր անցնում իսկ հարաւարեւելեան ճակատում կանգ էր առել Բատայսկում: Մեր մերժման դէպքում պիտի վերսկսէր առաջխաղացումը Կուբանի վրայ և բացի այդ մեզ սուսած էր, որ տնտեսական, քաղաքական և ամեն տեսակ համաձայնութեան հնարաւորութիւնը, ուկրաինական շահալուծ յետակայ առաջխաղացման դադարեցումը և Բեռլինում զուգարւած խտր կամիստիաների աշխատանքի յետակայ ընթացքը պայմանաւորւած կլինի սեծովեան նաւատորմիդի վերադարձին մեր համաձայնութիւն տալուց: Այսպիսով մեր նկատմամբ գերման ողջ իշխանութեան կենտրոնում այդ պահուն հաւատարմիդի վերադարձի հարցն էր զբաւած, որ պիտի պայմանաւորէր մեր յարաբերութեանց յետակայ ընթացքը: Յունիսի 18-ին տեղի ունեցած նաւատոր-

միդի մի մասի վերադարձը Սեւաստոպոլ՝ և յունիսի 19-ին մնացած մասի պայթեցումը վերջ դրեց այդ հղնաժամային մոմենտին: Դրանից յետոյ բացեց իր նիստերը Բեռլինում կամիստիան, որ մինչ այդ վաղուց դադարեցրել էր իր ժողովները և ուկրաինական ճակատում գերմանական զօրքի առաջխաղացումը կանգ առաւ: Կիւնում բանակցութիւններն աւելի արագ ընթացան: Յունիսի Ծ-ից յետոյ, երբ մենք համաձայնութիւն տւինք նաւատորմիդի վերադառնալուն, երեք օր անց, այսինքն՝ յունիսի 12-ին Ուկրաինայի հետ ընդհանուր զինապաշար կնքեց: Յունիսի 17-ին համաձայնութիւն կայացաւ դեմարկացիոն գծի մասին ուկրաինական հիւսիսային ճակատում և պատերազմներն ուղարկւեցին Բատայսկ այդ վայրերում էլ դեմարկացիոն գիծ հաստատելու համար: Խաղաղութեան բանակցութեանց զլխաւոր հետաքրքրական կէտը—Ուկրաինայի սահմանների հարցն էր: Վերջապէս համաձայնութիւն կայացաւ, որ վիճելի վայրերի բախտը պիտի ընթերենդումի միջոցով որոշւի և այնպիսի միջավայրում, ուր բւեարելութեան ազատութիւնն ապահովւած լինի:

Տաճիկների, իսկ աւելի ուշ նաև գերմանացիների, առաջխաղացումը ծայրագոյն հարաւում գիւրանում էր Անդրկովկասեան կառավարութեան քաղաքականութեամբ, որ ազգաբնակչութեան արտօնեալ խմբակցութեանց վրայ էր հիմնւում և պարզորոշ թշնամական դիրք էր բռնել Ռուսաստանի Խորհուրդների նկատմամբ: Երբ որ ռուս կառավարութեան

այսպէս կոչւած Անդրկովկասեան կառավարութեան հետ յարաբերութեանց մէջ մտնելու գործը անաշող անցաւ, Գերմանիան առաջարկեց իր միջնորդութիւնը մեր և Անդրկովկասեան յարաբերութիւնները հարթելու գործում և երբ որ մենք մեր համաժայնութիւնը աւելնք, կոմս Միրբախը նախ մեզ առաջարկեց, որ մենք ուղարկենք մեր պատւիրակութիւնը Կիւե՝ Անդրկովկասեան կառավարութեան հետ բանակցութիւններ վարելու համար, իսկ մենք առաջարկեցինք Վլադիկովկասը և պրնոլում էինք անմիջական բանակցութեանց սկզբունքի վրայ, ապա՝ կոմս Միրբախը ինձ հաղորդեց, որ Անդրկովկասեան կառավարութեան ներկայացուցիչները Մաչաբելի և Յերեսելին Մոսկվա են գալիս և որ զերման կառավարութիւնը շատ է ուղում, որ մեր մէջ բանակցութիւններ բացւին։ Սակայն Անդրկովկասեան կառավարութիւնը քայքայեց։ Վրաստանի Ազգային Խորհուրդը Մոսկվա ուղարկեց Խունդամէին իբրեւ իր ներկայացուցիչ, որի հետ մենք բանակցութիւններ չենք վարել։ Մեզ յայտնի է, որ այսպէս կոչւած անկախ Վրաստանի կառավարութիւնը աղգարնակութեան լոկ մենաշնորհեալ մասի ներկայացուցիչն է և որ ժողովրդի լայն խաւերը չեն կամենում և չեն ճանաչում անշատումը Ռուսաստանից։ Լուր ստացւեց, որ Ազերբէյջանի մասնագետները ինչ որ Ֆիկտիվ ներկայացուցիչներ իրենց անկախ կառավարութիւն են անւանում, մինչդեռ մենք շատ լաւ գիտենք, որ Ազերբէյջանի ժողովրդական

մասսան Խորհուրդների Ռուսաստանից անշատու է չի կամենում։

Գերման կառավարութիւնը մեզ հաղորդեց նաև հիւսիսային Կովկասի լեռնականների այսպէս կոչւած դաշնակից կառավարութեան մանիֆեստը, որով յայտարարուած է նրանց անկախութիւնը, մինչդեռ իրօք հիւսիսային Կովկասն ամբողջապէս Խորհուրդների Խշխանութեան կողմնակիցների ձեռքին է, որոնք կարող կերպով ժխտում են անշատումը Խորհուրդների Ռուսաստանից մի բան, որ յայտարարեց իսկ որ դեմոկրատական և համաժողովրդական բնորոշութեամբ հաստատուած Թերերի ժողովրդական Խորհուրդը։ Այսպէս կոչւած անկախ Վրաստանը թոյլատրեց Գերմանիային իր զօրքը փոխադրել երկաթուղով և զբաղնով ուղի բացեց դէպի Բաղու։ Տանիկ զօրքերն, ինչպէս մեզ յայտնի է, հայկական վայրերում են դառնում, որտեղ զօրեղ մասսայական շարժում տեղի ունի։ Կովկասի հարցը դրւած է Բերլինում զումարւած քաղաքական մասնաժողովի օրակարգում։

Գերմանիայի և Ռուսաստանի յարաբերութիւնները անտեսական բնազաւառում պայմանաւորւած են մի կողմից Ռուսաստանում զերման կայքին ցարական ռազմական օրէնսդրութեամբ և հոկտեմբերեան Յեղափոխութեան սոցիալական օրէնսդրութեամբ հասցրած վնասների մաքրելու անհրաժեշտութեամբ, միւս կողմից՝ երկու երկրների դրութիւնից բղխած անտեսական փոխ-յարաբերութիւն ստեղծելու անհրաժեշտութիւնից։ Բրեստի պայմանագիրը մեզ

պարտաւորել է հասուցանել այն զերման քաղաքացիների կրած վնասները, որոնց ձեռնարկութիւնները խափանւած են եղել կամ դիվիդենդների, փոխառութեանց տոկոսի վնասն է ուշացել պատերազմի շնորհիւ: Այդ պարտականութիւնն ի կատար ածելու համար մենք հարկադրուած էինք յատուկ օրգան ստեղծել, որ զերմանացիների պահանջներն ստուգի: Այդ օրգանը — Առևտրի և Արդիւնաբերութեան Ժողովրդական Կոմիտարիատին կից լիկվիդացիոն բաժինը — ստեղծւած է և ամենայն աշօղութեամբ գործում է: Եւ եթէ ցարական ռազմիկ օրէնսդրութեան յարուցած մեր պարտքերի մարքումը մեր ուղածից դանդախ է առաջ գնում, մի բան որ տեղիք է տալիս զերման կառավարութեան անընդհատ զանդաւանդներին, — մեր ապագայ մասնակի թերութեանց մեղքը է, այդ հանդամանքն այժմ վերացւում է, այլ ռուս բուրժուազիայի մեղքն է: Փաստ է, որ ռուս բուրժուազիան ուղում է Կենտրոնական կառավարութեան դիմաց մեր ունեցած պարտականութիւններից օգուտ քաղել և զանազան ֆիկտիվ *сдѣлка*-ներով ներկայանալ մեզ իբրեւ զերման պահանջող: Հին փոխառութեանց և դիվիդենդի վնասի հարցը չի կարող լուծւել անկախ մեր այլ պարտականութիւններից, որ բղխում է մեր սոցիալական օրէնսդրութիւնից և մեր գերիների Գերմանիայում պահելուց: Մեր սոցիալական օրէնսդրութիւնը փորձում է Բանւոր — Գիւղացիական Կառավարութեան ձեռքում կենտրոնացնել երկրի անտեսական կեսերի գլխաւոր աղբիւրները,

որոնցից շատերը օտարերկրացիների, ի թիւս որոնց նաեւ զերմանացիների ձեռքին են: Արդիւնաբերութեան այդ ճիւղերի ազդանացումը մեզ պարտաւորում է զերման հպատակների կրած վնասները վճարել: Մեր տեղական Սաւեանները յաճախ չէին ըմբռնում, որ Բանւորա Գիւղացիական Կառավարութեան շահը ոչ թէ նրա մէջ է կայանում, որ ձեռքն ընկածը խառն ու շփոթ կերպով դրուեն, այլ կանոնաւոր նացիոնալիզացիայի մէջ այն ձեռնարկութեանց, որ մեզ հարկաւոր են ընդհանուր-պետական անտեսական ծրագրի տեսակէտից: Ամեն տեսակ կինեմատոգրաֆների, զեղատների խառնաշփոթ նացիոնալիզացիան, օտարազգիների կարօղութեան աւանց ծալրացել կարիքի, անկարգ-անկանոն ռէկվիզիցիան հարիւրաւոր միլիոնի վնաս է նստել պետութեան վրայ: Իւրաքանչիւր նման աննպատակաշարժար քաղ բողոք է առաջ բերում զերման իշխանութեան կողմից, բողոքներ, որ դատ-դատ շալկելու հնարաւորութիւն չի լինում և անասելի աւելացնում են պարտքի բազմութիւնը, որ պիտի վնասւի: Մեր հասցրած վնասների հաշիւը, մեր պարտքերի ֆինանսական վնասումն ինչպէս և մեր սոցիալական օրէնսդրութեան կանոնաւորումն օտարահպատակների նկատմամբ շուտափոյթ լուծում են պահանջում: Խառը կոմիտսիան, որ հիմա աշխատում է Բերլինում անասելի բարդ հարց ունի իր սուղէ: Գերման կառավարութեան ներկայացուցիչների հետ միասնական նիստում Առևտրի և Արդիւնաբերութեան Ժողովրդական Կոմիտարիատի ներկայացուցիչ ընկ.

Բրովսկին կոմպրոմիսի հետևեալ պայմաններն առաջարկեց՝

1) Ժողովրդական տնտեսութիւնը բարձրացնելու նկատառումներով, Ռուսաստանը, իբրև չէզոք երկիր, պիտի վերականգնի իր տնտեսական յարաբերութիւնները Կենտրոնական Պետութեանց հետ և միաժամանական շարունակի, ըստ կարելւոյն, այդ յարաբերութիւնները համաձայնութեան երկրների հետ:

2) Մեր պարտքը, Բրեստի պայմանագրի համաձայն, Կենտրոնական տէրութեանց վճարելու համար մենք ստիպւած ենք փոխառութիւն կնքելու: Մեր պարտքի ընդհանուր գումարը—պետական պարտք է գառնում: Տոկոսը մենք պիտի մասամբ՝ մեր դիւղատնտեսական և անտառարուծական պրոդուկտներով վճարենք, մասամբ՝ ոսկով և մասամբ ռուս կառավարութեան ձեռքին զանազակ դերման պարտաթղթերով:

3) Ինչպէս այդ պարտքի ապահովման նպատակով, այնպէս էլ ռուս տնտեսութիւնը վերականգնելու համար կարեւորագոյն պրոդուկտներ գնելու նպատակով մենք մտադիր ենք Ռուսաստանի բնական հարստութեանց շահագործութեան որոշ կոնցեսսիաներ տալու: Կոնցեսսիաների պայմանները—Ռուսաստանում գոյութիւն ունեցող սոցիալական և առևտրական օրէնսդրութեան շրջանակներում են քննուած և պետութիւնը մասնակցում է հարստութեանց շահագործմանը, արդիւնքի մի մասից օգտուած և կոնտրոլն իրեն է վերապահում:

4) Եկեղեցիականները կարող են տարածել ժողովրդական տնտեսութեան հետևեալ բնագաւառների վրայ՝

ա) Նաւթահանութիւն,

բ) Երկաթուղիների կառուցում,

գ) Որոշ դիւղատնտեսական հողարածիների մշակութիւն և ուտիլիզացիա կուլտուրայի աւելի կատարելագործւած դիտական և տեխնիկական մեթոդներ մտցնելու նպատակով այն պայմանով, որ արդիւնքի որոշ մասն ստանայ Ռուսաստանը:

դ) Արհեստական պարտրտացումի արտադրութիւն,

ե) Ոսկեհանքերի շահագործութիւն և ալյն:

5) Սյա ամենն իրաւործելու համար պիտի հաւաքւի Ռուսաստանի բոլոր արտադիր ուժերը: Դրա նախապայմաններն են՝

ա) Գերմանիան պիտի միանգամայն մէր ներքին տնտեսական քաղաքականութեան մէջ չխառնուի:

բ) Գերմանիան չպիտի խառնուի Ռուսաստանի և այն պետութեանց, որ առաջ մի տնտեսական միաւոր էին կազմում Ռուսաստանի հետ—Ուկրայնա, Լեհաստան, Մարմբալիկ զաւառներ, Կովկաս—տնտեսական փոխ-յարաբերութիւն հաստատելու մէջ:

գ) Գերմանիան պիտի նանաչի արտաքին առևտրի և բանկերի նացիոնալիզացիան:

դ) Կրիվոյ Ռոգի և Կոկլասի հանքերի ստեղծագործությունների կիսի ստացման ապահովումը:

ե) Ուկրաինայի և Դոնի շրջանի սահմանագծի ուղղումը այնպես, որ Ռուսաստանին կցվի Իւրեկայի, Ռուս-Բելոբի, և Դոն-Իւրեկի քարածուխի հանքերը, որովհետեւ սահմանագիծը հենց այդ դործարանների շրջանի միջով է անցնում: Այդ հարցերը պիտի քննութեան առնեն Մոսկվայում Յատուկ Խումն Կոմիտայում: Եթէ Գերմանիայի կապիտալիստական դատակարգն ունակ է ղեկավարելու հեռատես շահերով, ունկնդրել իր օգուտով, նա պիտի բնութի, որ չի կարելի Ռուսաստանից անդադրող ըստ կարելույն մեծ քանակութեամբ պրոդուկտներ քաղելու նպատակով խանգարել նրա տնտեսական վերածնութեան պրոցեսը, որ հնարաւոր է միմիայն այն դէպքում, եթէ կանոնաւոր կերպով կազմակերպւի արդիւնաբերութիւնը համաձայն Ռուսաստանում տիրող պրոլետար դատակարգի և չքաւոր գիւղացութեան շահերի: Մենք նման արգելք կհամարէինք Ռուսաստանի տնտեսութեան կազմակերպութեան գործում:

ա) Բողոք նաղիոնայիցայի դէմ այն ամենի նկատմամբ, ինչ որ անհրաժեշտ է Ռուսաստանի տնտեսական ընդհանուր ծրագրի տեսակէտից:

բ) Կոնցեսսիայի հիման վրայ ստեղծւելիք մեռնարկութիւնները երկրի սոցիալական օրէնսդրութեանը չհարմարեցնելու ձգտումը:

դ) Մեր պարտքի վճարը հում նիւթով և պրոդուկտներով ստանալու ձգտումը:

դ) Ռուս հակա-յեղափոխական ուժերի պաշտպանումը, Ռուսաստանը իր հացի, քարածուխի և նաւթի աղբիւրից կտրելը: Սկսենք վերջինից: Մեր պատուիրակութիւնը, որ Բելոբիում բանակցութիւններ է վարում, ինչպէս և Կիւի մեր խաղաղութեան պատուիրակութիւնը պարզ և որոշ մատնանիշ են արել Գերմանիային, որ առանց Դոնի և Կուբանի հացի և Կոկլասի նաւթի, որ մեզ է պատկանում Բրեստի դաշնագրի հիման վրայ, Ռուսաստանը չի կարող կատարել այն ծանր պարտականութիւնները, որ զրել է նրա վրա Բրեստի պայմանագիրը: Գալով մեր պարտքի վճարման մէկին, այն է ապրանքներով վճարելով եղանակին, որ ձգտում են փաթաթել մեր վզին, մենք հրաւիրում ենք Գերմանիայի ուշադրութիւնն այն հանգամանքի վրայ, որ մեր վնասական մերժումը տակաւին չի նշանակում թէ մենք իրրեւ չէզոք երկիր հրաժարւում Լնք ըստ մեր կարեաց չափ Գերմանիային հում նիւթ և արդիւնաբերական պրոդուկտներ մատակարարելուց: Մենք պատրաստ ենք Գերմանիային տալու այն ամենը, ինչ որ մենք կարող ենք առանց վնասելու մեր սեփական շահերին տալ և ինչ որ չի հակասում մեր երկրի կացութեանը, իրրեւ չէզոք երկրի: Սակայն մեր շահը, հիւժւած երկրի շահը պահանջում է

նան թէ չէ, մենք պիտի հսկենք, որ մեր գերիները լեռնայ դարձն անշեղ շարունակի և նոյն արագութեամբ: Որովհետեւ Գերմանիայում մեր գերիները պարենաւորման տեսակէտից սարսափելի վիճակի մէջ են, մենք հարկադրւած ենք Ռուսաստանից նրանց համար բան ուղարկել: Լուր կայ, որ Աւստրո-Հունգարիայում էլ ուրա գերիների կեանքը ծայր աստիճան ծանր շրջապատում է անցնում: Հիմա մեր յարաբերութիւններն Աւստրո - Հունգարիայի հետ հարթւում են և դա մեզ հնարաւորութիւն կտայ ախտեղ էլ մեր ռազմագերիների դրութիւնը բարելաւելու համար պայքար մղելու: Հաղորդակցութեան սուղ միջոցների պատճառով մեր գերիները միայն աստիճանաբար կարող կլինեն հայրենիք դառնալ: Գերմանիայի և Աւստրո - Հունգարիայի հետ համաձայնութիւն է կայացել և այդ երկիրները մենք կոմիտարներ կուղարկենք ռազմագերիների հոգատարութեան համար Ռուսաստան եկած գերման և աւստրիական կոմիտարների ձեով: Այդ կոմիտարներն էլ կլինեն այն ապարատները, որոնց միջոցով մեր այդ քաղաքացիների կացութեան բարելաւման համար զործելու, որոնց վերադարձը գերութիւնից դեռ ևս ժամանակ է պահանջում:

Մեր յարաբերութիւնները Աւստրո-Հունգարիայի հետ շատ աւելի պակաս կենդանի են եղել քան Գերմանիայի հետ, որովհետեւ Աւստրո-Հունգարիան միայն նորերս ռատիֆիկեց (հաստատեց) Բրեստի պայմանագիրը:

Այդ յարաբերութիւններն սկզբում պահուում էին միմիայն ռազմագերիների վերադարձի խնդրով և միմիայն նորերս Վեննայից Մոսկվա եկաւ Ֆինանսական կոմիտան, որ պիտի աշխատի երկու պետութեանց փոխադարձ Ֆինանսական պարտաւորութեանց խնդիրը լուծելու այն հիմունքներով, որ մշակւում են Բեռլինում Գերմանիայի նկատմամբ: Մեր լիազօրն Աւստրո-Հունգարիայում քաղաքացի Կամենեն էր նշանակւած, սակայն տակաւին պատասխան չկայ, արդեօք ճանաչում է նրան աւստրո-հունգարական կառավարութիւնը, թէ ոչ: Շուտով նշանակւելու է աւստրո-հունգարական լիազօրը Մոսկվայում և դա զգալիօրէն երկու երկրների շփումը կշիւրացնի:

Կոմս Միրբախի հետ միաժամանակ Մոսկվա ժամանեց տանիկ ղեսպանը—Հալիբ Բեմիլ-Բէյլը: Ռուսաստանի և Տանկաստանի ժողովուրդների միջև, որոնք նմանապէս համաշխարհային կապիտալի շահագործումի առարկայ են—բարեկամական յարաբերութեանց հաստատման արդելառիթ էր հանդիսանում, դժբախտաբար, Տանկաստանի ազդեասիլ քաղաքականութիւնը Կովկասում, որտեղ տանիկ զօրքը Բաթումի, Ղարսի և Արզահանի գրաւումից չեւոյ առաջ շարժւեց դէնը, գրաւեց Ալեքսանդրոպոլս և սկսեց սպառնալ Բազուխ: Մեր արած բոլոր բողոքներին ի պատասխան՝ տանիկ ղեսպանը մատնացոյց էր անում Կովկասում մահմեդականների վրայ կատարւած գաղանդութիւնները և տսում, որ նրանք

են ստիպում Տանկաստանին միջամտել Կովկասի գործերին:

Աւելի ուշ եկած բուլղար զեապանք—պարոն Զապրաշնիկովը—յանախ մատնանիշ է անում, թէ ոչինչ չկայ, որ խախտէր Բուլղարիայի և Ռուսաստանի ժողովուրդների փոխադարձ բարեկամական վերաբերմունքը: Մենք մասնացոյց ենք անում բուլղար զեապանին, որ մեր քաղաքականութիւնը զերծ է որեւէ ազդեցութիւնից և զա հնարաւորութիւն է տալիս, որ երկու երկրների բարի զբաղիական յարաբերութիւնները չխախտւեն:

III

Խորհուրդների Ռուսաստանի վերաբերմամբ համաձայնութեան պետութիւններից ամենանպաստաւոր դիրքը հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներն են բռնած եղել: Յիշենք նախագահ Վիլսոնի ողջունական հեռագիրը Խորհուրդների Արտակարգ համագումարի առիթով մարտ ամսին: Ոչ որի համար գաղտնիք չէ, որ այն ատեն, երբ յօգուտ Եապոնիայի միջամտութեան Սիբիրում բազմաթիւ ծաղնեք էին լսւում, այդ բանի զխաւոր խոչընդոտը հիւսիսային Ամերիկայի կառավարութեան բացասական վերաբերմունքն էր: Գերմանիայի հետ տնտեսական համաձայնութիւն կայացնելու բանակցութեանց հետ զուգընթացաբար մենք ի նկատի ունենք նաև հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներին տնտեսական համաձայնութիւն առաջարկելու: Միաժամանակ դիմե-

լու ենք նաև Եապոնիային, որի հետ չնայած նրա Վլադիվոստոկում ափ հանած զեսանտին և եապոն մամուլի մի մասը յօգուտ միջամտութեան վարած պայքարին—մենք յոյս ունենք բարեկամական յարաբերութիւններ հաստատելու:

Ռուս փոխաւորութեանց զէռօյացումը Փրանսիական հասարակութեան բաւական լայն շրջաններում աննպաստ վերաբերմունք յարուցեց զէպի Խորհուրդների Ռուսաստանը: Միևնոյն ժամանակ, երբ Եապոնիայի, զուցէ և նրա գաշնակիցների Խորհուրդների տերիտորիան զինւած ներս խուժելու հնարաւորութեան խնդիրը սուր կերպարանք ստացաւ—մօտալուտ ճշմարտամի տաղնապալից նշանը Փրանսիական զէապան Նուլանսի ինտերվիւն, հանդիսացաւ զինւած միջամտութեան հնարաւորութեան մասին զուցէ և բնդդէմ Խորհուրդների իշխանութեան: Երբ որ ռուս կառավարութիւնը պահանջեց, որ իր յայտարարութիւններով երկու երկրի բարեկամական վերաբերմունքը խախտող զեապանը ետ կանչի, Փրանսիական կառավարութեան կողմից պատասխան չստացւեց և ներկայումս պ. Նուլանսը տակաւին ապրում է Վոլոգդայում, թէև ռուս կառավարութիւնը նրան համարում է իբրև մասնաւոր անհատ: Միւս կողմից Փրանսիական կառավարութիւնը նոյն իսկ ներս չթողեց Փրանսիական տերիտորիան ռուս կառավարութեան կողմից արտակարգ միսսիայի հետ զնացող քաղաքացի Կամենէին: Չնայած որ մենք բազմիցս զիմում արինք, մինչև օրս Փրանսիայում զանեող

գորքից վերադարձած են միմիայն խեղանդամները: Մեր ղինւորների վրայ ամեն ահասկ ճնշումներ են կատարւել նրանց ուսւ լեզիոնների շարքը մտցնելու նպատակով, որպէս զի շարունակեն մասնակցել պատերազմին: Զինւորների ճնշող մեծամասնութիւնը, ճանաչելով Խորհուրդների իշխանութիւնը, ընդունելով նրա բռնած զիրքը—որ Ռուսաստանը դուրս է գալիս պատերազմողների շարքից—ձգտում է աչդ ճնշումներին չենթարկւել: Նրանց չկտրեց անգամ տաժանակիր բատալիոններով Աֆրիկէ քշւելը: Դեռ տարւայ սկզբում, երբ բանակցութիւններ բացւեցին մեր գորքերը Փրանսիայից վերադարձնելու հարցի առիթով—Փրանսիան անհրաժեշտ պայման էր դնում, որ չէիս ու սլովակների խմբերը Փրանսիա ուղևորւին: Փրանսիան մի առանձին հողատարութիւն էր ցոյց տալիս նրանց նկատմամբ: Երբ որ չէիս ու սլովակների ապստամբութիւնն սկսւեց, Փրանսիայի ներկայացուցիչը Մասկիպում յայտարարեց, որ չէիս ու սլովակների զինաթափ անելը Փրանսիան նկատելու է իրրեւ անբարեացակամ ակտ: Անգլիայի, Իտալիայի և Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների ներկայացուցիչները նրան ձայնակցեցին:

Անգլիական կառավարութիւնն, ընդհակառակն, ոչ միայն իր սահմանները չգոցեց Խորհուրդների Իշխանութեան աղէնտների առջև, այլև գործնակոն յարաբերութեանց մէջ մտաւ Ռուսաստանի Խորհուրդների լիազօր ներկայացուցիչ քաղաքացի Լիտ-

վինովի հետ: Նրան իրաւունք էր տւած սուրհանդակ ուղարկելու և ընդունելու, շիֆրով օգտւելու, այնուհանգերձ բրիտանական իշխանութեան վերաբերմունքը դէպի նա շատ կողմից չի համապատասխանում Ռուսաստանի հանրապետութեան արժանապատուութեանը: Ռուսաստանի զիպրոմատիական ներկայացուցչութեան ղեւանի համար նա բնակարան վարձեց թէ չէ, տանտէրը, առանց որ և է հիմքի, պայմանը յայտարարեց փակւած և գատարանն, ակներե կերպով խախտելով օրէնքը, տանտիրոջ բռնի գործելակերպին հաւանութիւն տւեց, իր դատաւճոխն Խորհուրդների իշխանութեան համար վիրաւորակիւն մեկնարանութիւններ կցելով: Մեր սուրհանդակներին մանրակրկիտ կերպով խուզարկութեան ենթարկելուց չետոյ են միմիայն ներս թողնում: Երբ որ ընկ. Կամենեն ու Զալկինզն Անգլիա ժամանեցին, նրանցից խլեցին զիպրոմատիական վալիդները և ետ տւին միմիայն նրանց Անգլիայից մեկնելու պահուն: Այդ բնկերներին ստիպեցին ետ գնալ առաջին իսկ շոգենաւով և գնացքում նրանց ուղեկցող ոստիկանութիւնը նրանց հետ չափազանց բիրտու կոպիտ է վարւելիս եղել: Մեր զիպրոմատիական ներկայացուցչութեան գրասենեակում աշխատող մի քանի անձինք աքսորւած են եղել Անգլիայից նոյն իսկ առանց թոյլ տալու, որ տեսակցութիւն ունենան ընկ. Լիտվինովի հետ: Անգլիական իշխանութիւնը շարունակում է բարեացակամ վերաբերմունք պահպանել հին դեսպանատան և հին պատւիրակների հետ, որոնք հակախորհրդական

քաղաքական ազիտացիայի կենտրոններ են հանդիսանում: Անգլիական իշխանութիւնը նրանց է դիմում այն բոլոր գործերի վերաբերմամբ, որ ղինւորական պարտականութեան, ուսւ ուղղադներին, բրիտանական նաւահանգիստներում գտնւող ուսւ շողենաւերին և առհասարակ ուսւ շահերին է վերաբերում: Ընկեր Մակլինը, որ Գլազգովում էր դեսպան նշանակւած և ընկ. Սեմիոնովը, որ Սւտորայիայում էր նշանակւած նաւաւած չէին և նորերս ընկ. Մակլինը երկրորդ անգամ, 5 տարւայ տաժանակիր աշխատանքի է դատապարտւած: Ընկ. Լիտվինովի դրութիւնը Լոնդոնում ծայր աստիճան ծանր էր այն շրջանում, որ յաջորդեց Բրեստի պայմանադիրն ստորագրւելուն: Դեղին մամուլը նրա վրայ վիրաւորանքներ էր թափում և կառավարութեան ներկայացուցիչներին հանդէս գալն այդ առիթով պարլամենտում այն կերպ չէր, որ կարողանային հակադդել լրագրական հալածանքին: Զափաղանց ծանր է Ռուսաստանի քաղաքացիների դրութիւնն Անգլիայում: Լրագրերի սիւնակները լի են պագրոմային ազիտացիայով իսկ նրանց վերադարձը Ռուսաստան խիստ դժւարացել է: Կերենսկիի օրօք կնքւած ուղղական կոնվենցիան իրաւունք է տալիս ուսւ քաղաքացիներին անգլիական զօրքի մէջ մտցնել: Մինչև օրս էլ անգլիական կառավարութիւնն այդ բանն անում է: 1918 թւի սկզբին մենք յայտարարեցինք մեծ բրիտանական կառավարութեան, որ ուսւ կառավարութիւնն այդ կոնվենցիայի դրութիւնն այլևս չի ընդունում: Ընկ.

Լիտվինովը պահանջեց, որ առաջներում այդ կոնվենցիայի հիման վրայ անգլիական զօրքի մէջ առած ուսւ քաղաքացիներին ազատեն, սակայն նրան պատասխանեցին, որ օտարերկրացիները չեն կարող Անգլիայում ապրել առանց ազգային կարեւորութիւն ունեցող աշխատանք կատարելու, ուստի և մատնացոյց արւած ուսւ քաղաքացիները բանւոր բատալիոնների մէջ կմտցեն զօրքին կից նախապատրաստական աշխատանքներ կատարելու համար: Շուտով նրանցից շատերը Եդիպոս ուղարկւեցին երրայական Պաղէստինի լեզիոնի մէջ մտցնելու համար: Ռուս քաղաքացիների զօրաժողովը ժամանակաւ որպէս վազարեց, սակայն շուտով վերսկսեց և այս անգամ հաւաքւածներին ոչ թէ զօրքի մէջ էին տեղաւորում այլ՝ բանւոր լատալիոնների մէջ:

Երբ որ ապրիլի 5-ին Վլադիվոստոկում եւս պոնիացիների սոի իջնելը տեղի ունեցաւ, անգլիացիք էլ 50 մարդ ափ հանեցին: Անգլիական մամուլի մեծ մասը և առանձնապէս ուղղական ինդուստրիայի շահերի ներկայացուցիչ լորդ Նորդկլիքի լրագրերի խումբը վաղուց հետէ պահանջում է եւս պոնական միջամտութիւնը Սիբիրում: Դրան հակադրում են ոչ միայն բանւոր շարժման աւելի առաջագէտ տարրերն, այլ և առաջադիմականների մի խոշոր խումբը և նոյն իսկ պահպանողականներից նրանք, որոնք աւելի հեռատես են: Կառավարութեան վերաբերմունքն այդ հարցի նկատմամբ մինչև օրս պաշտօնապէս տակաւին վերջանականօրէն չի որոշւեր Ռու-

սաստանի և Անգլիայի յարաբերութեանց ամբողջ չե-
տակալ ընթացքը կախած կլինի նրանից թէ մեծ
բրիտանական կառավարութիւնը վերջ ի վերջոյ ինչ
դերք կրունի Ռուսաստանի զործերին միջամտելու
խնդրի նկատմամբ:

Երբ որ Ռուսաստանը դեռ ևս մասնակցում էր
պատերազմին, համաձայնութեան պետութեանց հետ
— Մուրմանսկում մշտապէս անգլիական ռազմաւա-
ւեր էին գտնուում: Մուրմանսկի համապարհը մեծ
դեր էր կատարում Ռուսաստանի և իր դաշնակից-
ների միջև ռազմական հոգաբարեկցութիւն պահ-
պանելու համար: Բրեստի խաղաղութիւնը կնքելուց
յետոյ Մուրմանսկի վրայով Արեւմուտք ուղևորւեցին
ռուսաց ճակատում գտնուող ռազմական մասնազեա-
ներն ու լրացուցիչ խմբերը, որոնք առաջներում եկել
էին Արեւմուտքից: Այդ կացութիւնը երկար առեւ
չէր կարող: Մենք բանիցս դիմում ենք արեւ անգլի-
ական ներկայացուցչին և մատնացոյց արել ռազմա-
նաւերի Մուրմանսկից հեռացնելու անհրաժեշտու-
թիւնը: Վերջապէս, երբ որ չափազանց երկար առեւ
դրութիւնը Մուրմանսկում Ռուսաստանի արդի մի-
ջադպին դրութեան մշտական և ահներև խախտում
հանդիսացաւ, յունիս 14-ին Արտաքին Գործոց Ժո-
ղովրդական Կոմիտարիատն Անգլիայից, Ֆրանսիա-
յից և Միացեալ Նահանգներից պահանջեց, որ իրենց
ռազմանաւերը հեռացնեն: 10 օր անց՝ Անգլիան
Մուրմանսկում ափ իջեցրեց 1100 մարդ: Ի պատաս-
խան Խորհուրդների սահմանները զինւած ներս

խուժման մենք պահանջեցինք, որ ներս խուժած
ռազմական ուժերը հեռացնեն և Մուրմանսկ ու-
ղարկեցինք մեր զօրքը: Մեծ բրիտանական աղէնա-
ներն անգլիական ուժերի ներկայութիւնը Մուրման-
սկում նրանով ևն բացատրում, իրր թէ նրանք եկել
են այդ վայրերը դերման-Ֆիննական առաջխաղա-
յումից պաշտպանելու: Այն ժամանակ, երբ համա-
ձայնութեան պետութիւնները յայտնում են իրենց
համակրանքը չեխ-սլովակների խմբերին, որ Ռուսաս-
տանում ահներև հակայեղափոխական պաշար են
մղում, Մուրմանսկում իր իշխանութիւնը լիակատար
կերպով վերականգնելու հարցը Խորհուրդների իշխա-
նութեան համար կենսական խնդիր է: Այդ խնդիրը
լուծելու նպատակով մենք լարում ենք մեր բոլոր
ուժերը, յուսալով որ այդ ժանր խնդիրը բարեյաջող
էլք կունենայ:

Ճիշտ այնպէս, ինչպէս Խորհուրդների Ռուսաս-
տանը մտադիր է Գերմանիայի և Հիւսիսային Ամե-
րիկայի Միացեալ Նահանգների հետ տնտեսական հա-
մաձայնութիւն կնքել, կամենալով նրանց հետ ապ-
րանքների փոխանակութիւն կատարել և պատրաստ
է նրանց տնտեսական ապարատի մատուցած օգնու-
թեան համար վճարել, այնպէս էլ Խորհուրդների իշ-
խանութիւնը Անգլիայի նկատմամբ է մտադիր վարւե-
լու—և այդ հնարաւորութիւններն օգտագործելը հի-
մա նրանից է կախւած: Մեզ յաւանի է, որ անգամ
Անգլիայում տիրող դասակարգերի շրջանում էլ կան
տարրեր, որ ձգտում են Խորհուրդների Ռուսաստա-

նի հետ կապուն բարեկամական յարաբերութիւն հաստատել: Իսկ Անգլիայի հզօր բանւոր դատակարգի մէջ Խորհուրդները իշխանութիւնն արդէն բազմութիւ գիտակից բարեկամներ ունի: Եթէ կառավարչական շրջանի հետ սերտ կապ ունեցող այսպէս կոչւած բանւորական լիւերները խուսափում են Խորհուրդների Ռուսաստանի նկատմամբ բարեացակամ զգացմունքներ արտայայտելուց, դեռ ևս ստիպւածութիւն սոցիալիստական կուսակցութեանց կողքին, որոնցից Բրիտանական Սոցիալիստական Կուսակցութիւնը մեղմ շտապէս ոգեշունչ միաբանութիւն է արտայայտում, մեղ լուրջ բարոյական օգնութիւն է ցոյց տալիս ֆարրիկների աւագների հզօր և անգիմադրելի շարժումը, Անգլիայի բանւոր դատակարգի մաստայական շարժման ինքնավարութեան այդ նոր ձևը, որ ներկայումս անդլիական բանւորական շարժման ամենաուժեղ և ամենաառաջադեմ աղբակն է:

Ֆրանսիայի և իտալիայի—Ամերիկայի միացեալ նահանգների յօգուտ չեխ ու սլովակների արտայայտած կոլլեկտիվ յայտարարութեանը մասնակցել են Անգլիան էլ, Իտալիան էլ: Մինչև վերջին դէպքերը, որ կապւած են այդ շարժման հետ, իտալական ներկայացուցիչները շարունակ պայծառօրէն ընդդժում էին Իտալիայի բարեացակամ վերաբերմունքը դէպի մեր լեզափոխական ժողովուրդն ու կառավարութիւնը: Երբեմն առ երբեմն մեղ յաճախող բելճիք աղետներն էլ Բելճիքի համակրութեան վառ զգացմունքն էին յայտնում մեզ: Դժբախտ սերբ ժողովուրդն իր

արդի ողջ կացութեամբ հակուժ է Ռուսաստանի հանրապետութեան ժողովրդի կրած ծանր փորձութեանց հանդէպ դիտակցելու իր միաբանութիւնը: Իսկ սերբ պաշտօնական ներկայացուցիչների վերաբերմունքը դէպի մեզ՝ անդրադառնում է համաձայնութեան պետութեանց այս կամ այն շրջանում դէպի մեզ ունեցած վերաբերմունքի:

Մեր վերաբերմունքը դէպի ռումին կառավարութիւնն ու դէպի ռումին ժողովուրդը չպէտք է կապել իրար: Ռումին ժողովրդի մէջ արդէն փոխանցնում են ռուս լեզափոխութեան սկզբունքները: Մինչև օրս մեր յարաբերութիւնները ռումին կառավարութեան հետ կարգի չեն ընկել: Բեսարաբիոյ կցումը Ռումինիային տեղի ունեցաւ Ֆիկտիվ ինքնորոշման միջոցով: Ազգաբանակութեան մի խմբի ցանկութեան արտայայտութիւնն էր դա ու ի կատար ածւեց անյուր բռնութեամբ:

Ձեզօր պետութիւններից Շվեդիան - դերման քաղաքացիների շահերն է պաշտպանել, Դանեմարքը - աւստրո - հունգարական: Գերման և աւստրո - հունգարական ռազմագերիների խնդիրը մեր և Շվեդիայի ու Դանեմարքի միջև անընդհատ և ամենաջերմ յարաբերութեանց նիւթ է եղել: Սկանդինաւիայի բոլոր երեք պետութեանց հետ մենք ծգտում ենք սերտ անտեսական փոխ-յարաբերութիւն հաստատել: Մեր քաղաքացիների, հետեւապէս նաև ռազմագերիների շահերը Գերմանիայում—Սպանիան է պաշտպանել Խորհուրդների Ռուսաստանին սակայն Սպանիան չա-

փազանց զուսպ է վերաբերում: Սպանական զեսպանատունը Բեռլինի մեր պեսպանատան բախանինքը զերման կառավարութեան է յանձնել և մինչև օրս մեր ազգնազերիններին վերաբերեալ գործավարութիւնը մեզ չի յանձնել: Սպանիայից մեր քաղաքացիներին կառավարութիւնը հրամարում է բաց թողնել: Զւիցարական կառավարութիւնը յայանեց, որ համաժայն է ճանաչել ընկ. Բերեդինին, որին մենք լիազօր-ներկայացուցիչ էինք նշանակել: Իսկ նրա միսսիայի խումբն ընդունել՝ առաջին անգամից համաժայնեց հիմա էլ երբեմն դժւարութիւններ է յարուցանում Զւիցարիա գնացող մեր սուբհանգանների համար:

Բոլոր այդ աէրութեանց, ինչպէս և առհասարակ օտար պետութեանց հետ մեր յարաբերութեանց վրայ անդրադառնում է մասնաւոր սեփականութեան իրաւունքի խախտումը, որ բղխում է մեր Բանւոր—Գիւղացիական կառավարութեան գիկտատուրայից: Այն չափով, ինչ չափով այդ խախտումը օրէնսդրական ճանապարհով է կատարւում և կենտրոնական կամ տեղային տուրքային իրաւունքի կիրարկումն է հանդիսանում, օտարերկրացիները պիտի հպատակին: Իսկ այն չափով, ինչ չափով դա—խառնիճազանն զործողութեանց արդիւնք է և չի տեղաւորւում խստիւ մտածւած անտեսական քաղաքականութեան շրջանակի մէջ—Արտաքին Գործոց Ժողովրդական Կոմիտարիատը շարունակ տեղական Սովդեպների վրայ ներգործել է, որպէս զի օտարերկրացիների դրութիւ-

նը կանոնաւորւի և այդ նիւթի մասին Ժողովրդական այլ կոմիտարիատների հետ համաժայնութեան գալով, ներկայումս կանոնադրութիւն է մշակւում: Օտար կառավարութեանց մենք հասկանալ ենք տալիս, որ մեր սոցիալական վերանորոգումները չեն կարող կանգ առնել նրանց շէմքի սուչե, որոնք օտարահպատակ են համարւել:

Մեր քաղաքականութիւնն Արեւելեան երկիրներում նախորդւած է խաղաղութեան դեկրետում, որ միաժայն ընդունւեց Բանւոր, Զինւոր և Գիւղացի Խորհուրդների համապատասխան համազումարներում 1917 թւի հոկտեմբերի 26-ին:

Իմպերիալիստական ռեժիմն Արեւելքում գաղտնի պաթումի մի առանձին տեսակն է ստեղծել: Դա այսպէս կոչւած երուպական կոնցեսիանների և ֆակտորիումների հիմնելու իրաւունքն է և կապիտալացիայի հիմնարկութիւնն, այսինքն իմպերիալիստական երկիրների քաղաքացիներն Արեւելեան երկիրների տեղական օրէնքներին և կարգերին չեն հպատակւում: Իմպերիալիստական կառավարութիւններն օտար երկրներում պահած գինւած ոյժի վրայ են հիմնւում: Այդ զօրքը մասամբ իրենց գինւորներից է բաղկացած լինում, մասամբ թալանչիները տեղական բնակիչներից են կազմակերպում: Այսպիսով նրանք Արեւելեան երկիրներում այնպիսի կարգ են հաստատել, որ իրենց հպատակներն ու շահերը բացառիկ նպատաւոր պայմանների մէջ լինեն ի վնաս տւեալ Արեւելեան երկրի Ժողովրդի: Նրանք հիմնել են իրենց ֆակտո-

րիումներն, այսինքն բնակավայրեր, որտեղ տեղական ժողովուրդը կամ ապրում է որպէս սարուկ, կամ բնաւ զրկւած է ապրելու իրաւունքից: Նրանք մենաշնորհւած են պետական իշխանութիւնից կատարելապէս անկախ լինելու իրաւունքով: Այսպիսով նրանք ստեղծել են, իր տեսակի անառիկ բերդեր, որտեղից նրանք տարածում են իրենց իշխանութիւնն Արեւելքի նշնւած ժողովուրդների վրայ:

Սոցիալիստական Ռուսաստանն իրերի նման կարգերի հետ չի կարող հաշուել, եթէ անգամ դա դաւերով սրբազործւած լինի: Սոցիալիստական Ռուսաստանը հոկտեմբերեան Յեղափոխութեան առաջին իսկ օրից Արեւելքի նշնւած ժողովուրդներին յայտարարեց, որ ինքր ոչ միայն պատրաստ է իր նմանօրինակ իրաւունքներից հրաժարւել, այլև իր բոլոր նիւղ ու ջանքը կթափի, որպէս զի Արեւելեան ժողովուրդներին հնարաւորութիւն տայ իրենց կորուսած ազատութիւնը վերականգնելու: Մենք հրաժարւեցինք բոլոր գաղանի պայմանագրերից, որոնցով Արեւելեան երկիրների կառավարող շրջանները իրենց շահերից կամ բռնութեան սպառնալիքից զրդւած իրենց կապել են ցարի կառավարութեանը, տասնեակ նոյն իսկ հարիւրաւոր տարիներով ժողովրդական մասսան ստրկութեան մատնելով: Մենք անմիջապէս մեր զօրքերը հանեցինք զրաւած պարսից տերիտորիայից և Պարսկաստանից ետ կանչեցինք մեր ռազմական ինստրուկտորներին, որոնց պարտականութիւնն այն է եղել, որ տեղական ժողովրդից զօրք ստեղծեն

ռուս կապիտալիստների և պարսիկ աքսոլիտականների շահերը պահպանելու և պաշտպանելու համար: Մենք տեղեկացրինք Չինաստանին, որ ցարի կառավարութեան Մանջուրիայում տրած գաւթումներից մենք հրաժարւում ենք, որ Չինաստանի դերագոյն իրաւունքները մենք վերականգնում ենք այն տերրիտորիայի վրայ, որի միջով անցնում է զլխաւոր առևտրական երակը—Չին-սրեւելեան երկաթուղին, որ չին ու ռուս ժողովրդների սեփականութիւնն է և որ բազմաթիւ միլիոններ ժողովրդական փող է կլաւել ուստի և պատկանում է միմիայն այդ ժողովուրդներին և ուրիշ ոչ ոքի: Աւելին ևս, մենք կարծում ենք, որ եթէ ռուս ժողովրդի այդ երկաթուղու վրայ մսխած փողի մի մասը Չինաստանը վերադարձնի—Չինաստանը կարող է երկաթուղին ետ դնել, առանց սպասելու ժամանակամիջոցի լրանալուն, որ նրա վրին բռնի փաթաթւած է ըստ պայմանագրի: Մենք ետ կանչեցինք Չինաստանից բոլոր ռազմական պահակները, որ ցարի և Կերենսկիի կառավարութիւններն ուղարկել էին այնտեղ դեպքանատները պահելու և հին ռուս չինովնիկների կամայկանութիւնները պաշտպանելու համար: Մենք պատրաստ ենք հրաժարւել Չինաստանում, Մոնղոլիայում և Պարսկաստանում մեր քաղաքացիների տեղական օրէնքներին հպատակւելու և իրենց երկրի օրէնքներով կառավարւելու իրաւունքից: Մենք պատրաստ ենք հրաժարւելու նախկին ռուս կառավարութեան Չինաստանի, Մոնղոլիայի և Պարսկաստանի ժողովուրդ-

ների վրայ զանազան պատրաստումներով բարդած կան-
տրիբուցիաներից:

Մենք կուզենայինք լուր, որ ժողովրդական
մասսայի կուլտուրայի վարձացման վրայ և արևե-
լեան ու Ռուսաստանի դեմոկրատիայի փոխադարձ
մերձեցման գործի վրայ մտնեին այդ միլիոնները:

Հասկանալի է թէ ինչ տպււորութիւն գործեց
հոկտեմբերեան Յեղափոխութիւնը արևելեան ժողո-
վուրդների մասսաների վրայ: Ռուսաստանի անցքերը
նախ և առաջ մեր ասիական դրացիների մէջ ար-
մագանդ գտան: Մեծ յեղաշրջումը նրանց մէջ զար-
թեցրեց նոր և ազատ կեանքի տենչանք: Եւ այդ
բանն անգամ կապիտալիստական կառավարութեանց
պաշտօնական ներկայացուցիչները մեզինք չկարողա-
ցան ծածկել: Այն կուսակցութիւնը, որ Ռուսաստա-
նում յեղաշրջումը զլուխ բերեց, Չինաստանում «Գու-
անիւպան» է կոչւում, այսինքն լայն հումանիզմի կու-
սակցութիւն, Պարսկաստանում, որ պատառ բերի
է եղած և անգոր է իր գոյութեան պայքարը մղելու,
առաջ եկաւ մի շարժում, որն օտարերկրացիների
ձեռքով և նրանց վաճառած կառավարող դասա-
կարգերից փրկութեան միակ ելքը մերի նման ղեմո-
կրատիկ կազմակերպութեանց պատրաստելու մէջ է
տեսնում: Հարաւային Չինաստանում, որտեղ ազգա-
բնակչութիւնն աւելի գիտակից է—պարզէ ի պարզոյ
յեղափոխութիւն է փոթորկում և մենք այս օրերս
լսեցինք այդ շարժման ղեկավարների խոստովանու-
թիւնը, որ Սոցիալիստական Հանրապետութեան ութ-

ամսեայ գոյութեան փաստը Ռուսաստանում Սրե-
ւելքի ժողովուրդներին այն համոզմունքն է ներշն-
չում, որ հնարաւոր է նաև Սրևելքում նմանօրինակ
կայուն կարգեր հաստատել: Այնտեղ էլ, հեռաւոր
Սրևելքում, պայքար է մղւում ժողովրդի վզին
փաթաթւած զաղտնի պայմանագրերի դէմ: Հարա-
ւային Չինաստանի ակնյայտ յատարարութիւնը, թէ
դաշինքը հարեան պետութեան հետ, որ զրկում է
Չինաստանը իր բախտը տնօրինելու իրաւունքից, որ
Չինաստանը անդիմադրելիօրէն մղւում է դէպի արիւ-
նոտ սպանդանոց, այդ բացէ ի բաց յայտարարու-
թիւնը յանձնւած է մեզ, ինչպէս և աշխարհիս բո-
լոր դեմոկրատիաներին, յեղափոխական Չինաստանի
ներկայացուցիչների կողմից:

Հասկանալի է նմանապէս, թէ ինչ տպււորու-
թիւն գործեց կապիտալիստական կառավարութեան
վրայ ռուսական յեղափոխութիւնը: Փետրւարին Տո-
կիոյում բանւորները հանդէս եկան, բայց այդ շար-
ժումն իսկոյն և եթ ետպոնական կառավարութիւնը
ենչեց: Սոցիալիստների նորածագ կուսակցութեան
հինգ ականաւոր ներկայացուցիչները—մերթալաւե-
ցին: Ռազմական զրաքքնութիւնն ամենայն ջանա-
սիրութեամբ ոչնչացնում է Ռուսաստանից ելած բո-
լոր լուրերը: Մինչև օրս էլ մեր յեղափոխական Սի-
բիրն օտարերկրացիների միջամտութեան սպառնանքի
ներքոյ է գտնւում: Ապրիլի 5-ին տեղի ունեցաւ
ետպոնական ղեսանտի ափ իջնելը Վլադիվաստոկում:
Այդ գետնաւոր մինչև օրս այնտեղ էլ մնացել է:

Այնու հանդերձ՝ Եսայոնիայում էլ դանդաղորէն բայց և հաստատ կերպով, ժողովուրդը պայքար է մղում իր բախտը տնօրինելու իրաւունք ձեռք բերելու համար: Այդ պայքարը երեւան եկաւ նախ և առաջ ռուսաց զորքերին միջամտելու հարցում: Այն մարդը, որ եսպոն միջամտութեան միաբն էր ներշնչում, Եսայոնիայի մարդը, բայց և այնպէս առկաւին զօրեղ աւատական կարգի ներկայացուցիչ՝ վիկոնտ Մոտոնոն, է, որ առաջներում Ռուսաստանում զեւսպան է եղել և սերտ կերպով կապւած է Եսայոնիայում ապաստան գտած ռուս ետադէմներին հետ: Կարեւորեւած էր հեռանալ: Ներկայումս Եսայոնիայում ետադէմ ռազմիկ կուսակցութեան և ճնշւած չափաւոր ազատամիտների միջև տեղի ունի պայքար: Ետադէմականները ձգտում են բաղխում առաջ բերել ռուս և եսպոն ժողովուրդի միջև, որպէսզի մեր թուլութիւնից օգտուեն և իրենք հարստանան: Իսկ չափաւոր ազատամիտները, որ կամենում են մեզնից խաղաղ հանապարհով օգուտներ քաղել և չեն ուզում Ռուսաստանից ապագայում թշնամի ստեղծել—որովհետեւ նրանք շատ լաւ րմբռնում են, որ Եսայոնիայի միջամտութիւնը ռուսաց զորքերին կկանխորոշի մեր դոխաղարձ յարաբերութիւնները, դուցէ և ճեռաւոր Արեւելքի ողջ յետակայ պատմութիւնը:

Մենք պատրաստ ենք եսպոն քաղաքացիներին թոյլ տալու, որ խաղաղ կերպով և Միբրի բնական հարստութիւնները շահագործեն և՛ լայն մասնակ-

ցութիւն ունենան մեր արդիւնաբերական և առևտրական կեանքում: Այն դէպքում, եթէ Չինաստան իր համաձայնութիւնը տալու լինի, մենք պատրաստ ենք մեր իրաւունքներից մի քանիսից հրաժարւելու: Չին-արեւելեան երկաթուղու նկատմամբ և վաճառել Եսայոնիային այդ երկաթուղու հարաւային ճիւղը: Մենք պատրաստ ենք նաև Եսայոնիային այլ զիւրութիւններ տալու եսպոն պրոդուկտներն ու ապրանքները Ռուսաստան բերելու համար: Մենք պատրաստ ենք վերանորոգել առևտրական տրակտատը և ձկնորսային կոնվենցիան Եսայոնիայի հետ, որ եսպոն ժողովուրդի բարեկեցութեան աղբիւրներն են, քանի որ ռուսաց ձուկը ոչ միայն եսպոնացու սնունդի ամենակարեւոր պրոդուկտներից մէկն է, այլև զօրծ է ածւում բրնձի դաշտերի պարարտացման համար: Մենք այդ ամենն արդէն ի յայտ ենք ածել եսպոն կառավարութեանը և նրա հետ ոչ-պաշտօնական բանակցութեան մէջ ենք:

Եսպոն ժողովուրդն այդ ամենը պիտի իմանայ: Նա պիտի կշռադատի մեր զիջումների գինը, զիջումների, որ դուցէ՛ զազտնի է պահւած նրանից, ինչպէս շատ բան, որ կատարւում է Ռուսաստանում, պէս չափ գուցէ և այն, որ ռուս ժողովուրդը կկամենար իր ձեռքը մեկնել եսպոն ժողովուրդին և առողջ ու կայուն հիմունքների վրայ դնել իր փոխարարութիւնները: Եսպոն ժողովուրդը պիտի իմանայ, որ եթէ այդ տեղի չունենայ, եթէ մեր պարզւած ձեռքը կտխւած մնայ օդի մէջ—մեղքը ընկնելու է Ես-

պոնիայի այն դասակարգերի վրայ, որ այդ ամենն
իմանալով ծածկել են ժողովրդից իրենց անձնական
թալանչիական շահի նկատառումով: Եթէ բախտն
այնպէս դասաւորուեց, որ ռազմիկ դասակարգը թու-
նաւորի և կուրացնի: Երկրորդին և անմիտ քալ
անի ռուս յեղափոխութիւնը ճնշելու նպատակով—
Ռուսաստանի աշխատաւոր ժողովուրդներն, ինչպէս
մի մարմին, մի հողի կէլնեն մեր ամենազնահատելի,
ամենաթանկազին բանը— Սոցիալիստական Յեղափո-
խութեան նւաճումները պաշտպանելու համար:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Եղբայրացիներ, մեր ողջ միջազգային քաղաքա-
կանութիւնը վերջին չորս ամսուայ ընթացքում, մենք
պիտի ասենք, որ արդի կապիտալիստական կառավա-
րութեանց միջև Խորհուրդների Ռուսաստանն օտար
մարմին է: Ընդհանրապէս նրանք այնպէս են վերա-
բերում Խորհուրդների Ռուսաստանին, ինչպէս պա-
հանջում է ընդհանուր հողի բացակայութիւնը: Երկու
իմպերիալիստական կոալիցիաների միջև ընկած Խոր-
հուրդների Ռուսաստանի վիճակը, ինչպէս երկու
կրակի մէջ ընկածի վիճակն— անասելի ժանր է: Սա-
կայն մենք ամենայն վստահութեամբ կարող ենք
ասել, որ այդ զրութիւնից լաւագոյն, նոյն իսկ մի-
ակ էլքը— մեր ներքին ամրապնդումը արտադրու-
թեան համայնական հիմունքներով, ռազմիկ զօրու-
թեան վերականգնումով, մեր յեղափոխութեան նւա-
ճումները պաշտպանելու համար: Որ չափով որ մենք

կհասնենք մեր նպատակին ներսից, այն չափով կա-
ւանայ մեր զրութիւնը դրսից: Մեր ներքին քաղա-
քականութիւնից է կախած մեր արտաքին քաղա-
քականութիւնը:



ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ԼՈՑՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Ռ. Սոց. Ֆեդ. Խորհուրդների Հանրապետության Սահմանադրությունը.

2. Ն. Լենին—«Նամակ Ամերիկեան Քանտոններին»): զինք՝ 1 ը.

3. Վ. Ֆրիշե—«Պրոլետարական պոեզիան» զինք՝ 2 ը.

4. ՆերձԱԿ—«Բազուի դէպքերը» (Կոմմունիստական Կուսակցության թոռացիկի լաւելածով) զինք՝ 75 կ.

5. Զիշերին—«ԲՐԵՍՏԻՑ ՅԵՏՈՅ» (Զեկուցում Խորհուրդների 5-րդ Համագումարին) զինք՝ 1 ը.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՑՍ ԿՏԵՍՆԵՆ.

1. Վ. ՄԱՐԲՍ և Ֆ. ԷՆԳԷԼՍ—«Կոմմունիստական Մանիֆեստը»—Պլեխանովի, Կաուցկու և հեղինակների լառաջաբաններով. Թարգմ. Պ. Մակինցեանի.

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

1. Վ. ԿԱՈՒՑԿԻ—«Դէպի իշխանութիւն»).

2. Ն. Լենին—«Կարլ Մարքս»)—Համառօտ կենսագրութիւն և մարքսիզմի տեսութիւնը.

ՀՀ Ազգային գրադարան



NL0199682

